Կ-960[4]-10.03.2016,19.04.2016-ՊԻ-010/2 *Երկրորդ ընթերցում*

նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «,ինչպես նաև սույն օրենքի 75-րդ հոդվածում նշված գործերով» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետում «68-75-րդ» բառերը փոխարինել «68-74-րդ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 75-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 79-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը: